I

ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՏԵՐՈՒՆԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ

Զմյուռնիայի առաջնորդների գավազանագրքի վերհանումը միահյուսված է էջմիածնի տերունի թեմի և դրա, որպես կրոնական ինստիտուտի, դարավոր պատմությանը: Մեկ այլ պատեհության թողնելով առ այսօր քիչ ուսումնասիրված և ազգային հանրության հետ հարաբերվելու՝ էջմիածնական այդ յուրահատուկ կառույցի ազգապահպան ու պատմական նշանակության արժևորումը, այստեղ կփորձենք շարունակել Զմյուռնիայի առաջնորդների գավազանագրքի հետազոտությունը, որ սկիզբ է առնում մեր պատմագիտության երախտավորներ Ա. Ալպոյաճյանի և Տ. եպ. Պալյանի ուսումնասիրություններով[1]*: Զմյուռնիայի առաջնորդների ցանկը սկսենք այս հեղինակների միմյանցից բավականաչափ տարբեր հերթագայությամբ, թվագրումներով ու տարբերություններով՝ քննարկելով դրանք առանձին-առանձին: Նախապես նկատենք, որ Տ. Պալյանն այդ ցանկը սկսում է Հովսեփ վարդապետով, 1689 թվականից, իսկ Ա. Ալպոյաճյանը՝ շատ ավելի վաղ հիշվող առաջնորդով.*

1. Պոկնտոշ Կարապետ, *1614–1615:*

Ա. Ալպոյաճյանը հղում է իր սկզբնաղբյուրը՝ Գ. Սրվանձտյանցի հանրահայտ աշխատությունը՝ մի ուշագրավ վավերագրով, որ անծանոթ է Տ. Պալյանին: Այստեղ Գրիգոր Կեսարացին, որ քանիցս բազմել է Կ. Պոլսի պատրիարքական աթոռին (XVII դ. 1-ին կես), սաստիկ հանդիմանում է ժամանակի կաթողիկոս Մելքիսեթին՝ եկեղեցական կարգը խախտելու, ընչաքաղցության և դավանական անաղարտությունը քամահրելու համար. «Եւ Պոկնտօշ զԿարապետն որ Հռոմ դարձաւ եւ Հռոմ կին էառ եւ եօթն տարի ի հետ այն կնոջն ի Հռոմ կեցաւ, յիմայ եպիսկոպոսութեան հրաման ես տուեր եւ Թիրայու, եւ Իզմիրու եւ Մանիսայու առաջնորդ ես կացուցեր»[2]*:*

2. Տրդատ արք., *1635 թ.:*

---

[1] *Ա. Ալպոյաճեան. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի.– «Բիւզանդիոն» (Կ. Պոլիս, 1904, 14/27 – 15/28 ապրիլի, նույնի՝ Առաջնորդութիւն հայոց Իզմիրի (առաջնորդական ընտրութեան առթիւ).– «Բիւզանդիոն», 1908, 10/23, 10/25, 13/26, 14/27, 15/28, 16/29 ապրիլի, նույնի՝ Իզմիրի հայոց առաջնորդները.– «Դափնի» (Զմյուռնիա), 1922, թիւ 9, էջ 280–282, Տ. եպս. Պալեան. Գաւազանագիրք առաջնորդաց Զմիւռնիոյ.– «Դափնի», 1921, թիւ 1, էջ 25–28, թիւ 2, էջ 59–63, թիւ 3, էջ 91–93:*

[2] *Գ. Սրուանձտեանց. Թորոս աղբար կամ ճամբորդ Հայաստանի, մասն Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 281:*

Այս թվականին իր գրչագրած բժշկարանի հիշատակարանում Սարգիս երեցը գրում է. «Ես՝ անարժանս, որ սկսեցայ ի գրել զսա, որ մինչև ի կեան որ գրեցի նայ, Աստուծոյ ողորմութեամբն մեր հոգևոր հայրն մեր և կենդանի նահատակն տէր Տրդատ արքեպիսկոպոսն հրաւիրեաց և կոչեաց զմեզ աստիճան քահանայութեան ի ձեռնադրութիւն և մեք անարժան զոլով ապաւինեցաք ի Աստուծոյ ողորմութիւն… Ելեալ գնացաք Իզմիրու և Կօզէլհիսարն որ է վիճակն Ռհաննու աւետարանչին և անդ առաք զկարգ և զպատիւ քահանայութեան, եկաք Իզմիր և դարձեալ սկսեցաք զայս պատուական բժշկական հեքիմարանս… Եւ ի կատարելն սորա էր թուին Հայոց ՌՁԴ (1635) [յ]ունիս Ժ (10)… Գրեցաւ սա ի ժամանակս և ի կաթողիկոսութեան տեառն տէր Փիլիպոսին, որ այժմ երկրորդ լուսաւորիչն է Հայոց»[3]:

Արժեքավոր այս տեղեկությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ 1635-ի կողմերը Զմյուռնիայի և շրջակայքի առաջնորդանիստ կենտրոնը եղել է ոչ թե Զմյուռնիան, այլ Այտնը (Կյուզելհիսար), որտեղ և առաջնորդական պաշտոնը վարել է Տրդատ արքեպիսկոպոսը: Երկրորդ, ինչպես Պոկնտոշ Կարապետի ժամանակ, 1610-ական թթ., Զմյուռնիան (Այտն) եղել է էջմիածնի թեմը, որ Սարգիս երեցը վկայում է Փիլիպոս կաթողիկոսի հղումով: Ավելացնենք, որ Տ. Պալյանի տրամադրության տակ այս վավերագիրը չի եղել, ուստի Տրդատ արքեպիսկոպոսը չկա նրա ցուցակում:

3. Կիրակոս Թալինցի, *1651:*

Հիշատակվում է նշված թվականի մի ձեռագրում, որպես Զմյուռնիայի թեմի «վերատեսուչ» (առաջնորդ) և ինչպես ներկայանում է հիշատակարանում, «յոգնամեղի Կիրակոս Թալնցի, յերկրէն Արա[ր]ատցի, ի թեմէն Սբ. Լուսաւորչի, սնեալ և վարժեալ ի գահ իջման Սբ. Էջմիածնի, բայց ի վերջինս կոչեցեալ վերատեսուչ ի Զմիւռին Լիկեացւոց…»[4]:

Հայտնի չէ, թե երբ է Կիրակոս Թալինցին նշանակվել և թողել առաջնորդական պաշտոնը, բացի իր վկայություններից, որ 1651 թ. (իմա՝ Կանդիայի պատերազմի ժամանակ) ինքը Զմյուռնիայի առաջնորդն է, և որ այդ քաղաքի ազգաբնակչությունը կրել է պատերազմի ողջ աղետները՝ պաշարված լինելով ոչ միայն ծովից ու ցամաքից, այլև հենց թուրքերի սաստկացած բռնությունների պայմաններում:

Այս առաջնորդը ևս բացակայում է վերոհիշյալ հեղինակների ցուցակներում:

4. Ստեփանոս վարդ., *1655:*

Ա. Ալպոյաճյանը հիշում է այս վարդապետին, իբրև Հակոբ Զուղայեցու աշակերտի՝ վկայակոչելով «Դիւան հայոց պատմությունը»[5]: Ա. Ալպոյաճյանը Ստեփանոսի առաջ-

---

[3] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դարի, հ. Բ (1621–1640), կազմ. Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1958, էջ 596:

[4] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԷ դարի, հ. Գ (1641–1660), կազմ. Վ. Հակոբյան, Երևան, 1984:

[5] Մ. Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), Ա. Ալպոյաճյանի դիվան, թղթ. 7, վավ. 17–1: Տե՛ս նաև Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Ժ, ԺԵ–ԺԹ դարեր, հրատ. Գ. Աղանեանց, Թիֆլիս,

նորդության տարիներն է համարում 1657–1663-ը, իսկ Դավիթ Բաղիշեցին իր ժամանակագրության մեջ հայտնում է միայն, որ 1655 թ. նա եղել է Զմյուռնիայի առաջնորդը՝ լինելով, ի թիվս այլոց՝ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի աշակերտներից մեկը[6]*: Դժվարանում ենք ասել, թե Ա. Ալպոյաճյանը ինչ աղբյուրից է օգտվել՝ այդ 1657–1663-ը նշելիս:*

Տ. Պալյանն այս առաջնորդին չի հիշում:

5. Մաղաքիա եպ. Եփեսացի, *վախճ. 1661 թ.:*

Վկայակոչելով այս եպիսկոպոսի՝ Այտնում թաղված լինելու մասին մի դամբանագիրը (1661), որ հրապարակել է Հ. Քոսյանը, Ա. Ալպոյաճյանը ենթադրում է, որ նա «առաջնորդութեան պաշտոնով այս շրջանակը (Էգեյանի մերձափնյա տարածքներ – Ա. Խ.*) գտնուած է»*[7]*:*

Ենթադրությունը, իրոք, հավանական է, մանավանդ, ինչպես տեսանք Տրդատ. եպ. օրինակով, XVII դ. Այտնը առաջնորդական նստավայր էր:

6. Բարսեղ վարդ., *1665-ից առաջ:*

Ա. Ալպոյաճյանն այս առաջնորդին հիշում է մի Ոսկեփորիկի (1665-ից առաջ) վկայակոչումով. «Իզմիր քաղաքի առաջնորդ Բարսեղ վարդապետ, եկի քաղաքն Ման…(անշուշտ, Մանիսա – Ա. Խ.*) ուր Բ քահանայ ձեռնադրեցի ի Սբ Լուսաւորիչ եկեղեցւոյ սպասաւոր…»*[8]*: Գրեթե բառացի, նույնն է ասված, սակայն առանց Ոսկեփորիկի և 1665 թ. հիշատակության, Տ. Պալյանի գավազանագրքում*[9]*:*

Բարսեղ վարդ. մասին այլ տվյալ մեզ հայտնի չէ:

7. Հովսեփ վարդ., *1683–1706:*

Տ. Պալյանն իր գավազանագրքում առաջինը նշում է այս առաջնորդին՝ հենվելով 1689 թ. Զմյուռնիայի Ս. Ստեփանոս և Ս. Բարդուղիմեոս եկեղեցու նորոգության արձանագրության վրա, որտեղ հիշվում է Իզմիրի առաջնորդ Հովսեփ վարդապետը[10]*:*

1912, էջ 52: Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. 2, կազմ. Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 361:

[6] *Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 361:*

[7] *Ա. Ալպոյաճյան. Իզմիրի հայոց առաջնորդները, էջ 280: Հ. Քոսյան. Ակնարկ մը հնութեան բեկորներու.– «Հանդէս ամսօրեայ», 1906, թիւ 9, էջ 279:*

[8] *ՄՄ, Ա. Ալպոյաճյանի դիվան, թղթ. 7, վավ. 17–1, էջ 72:*

[9] *Տ. Պալեան. նշվ. աշխ., թիւ 2, էջ 59:*

[10] *Տ. Պալեան. նշվ. աշխ., թիւ 1, էջ 25–26: Այս արձանագրությունը ուշագրավ է մեկ այլ լուսաբանությամբ ևս. «ես Իզմիրու առաջնորդ Յովսէփ վարդապետս, ապաւինեցայ յողորմութիւն Աստուծոյ ի սուրբ Ստեփաննոս և ի սուրբ Բարդուղիմեոսս եւ զեկեղեցիս հիմնարկեցաք», ասված է այնտեղ: Դարձվածը վկայում է, որ Զմյուռնիայում XVII դ. եղել է մեկ եկեղեցի՝ երկու սրբերի անվամբ: Ձեռագրերում՝ սկսած 1625 թվականից, այն քանիցս հիշատակվում է նրանցից կա՛մ մեկի (Ս. Ստեփանոս), կա՛մ մյուսի (Ս. Բարդուղիմեոս) անվամբ, որ կարող էր մղել այն կարծիքին, թե զմյուռնահայերը երկու եկեղեցի են ունեցել: Խնդրո առարկա արձանագրության մեջ եկեղեցու լրիվ*

Ա. Ալպոյաճյանը Տ. Պալյանի հիշատակած այս վավերագրին հավելում է այլ տեղեկություններ Հովսեփ վարդ. վերաբերյալ. Հովսեփը հիշվում է Մանիսայի Ս. Լուսավորիչ եկեղեցու զանգակատան՝ 1661 թ. արձանագրության մեջ, ըստ Հ. Քոսյանի՝ 1686–1687 թթ. Վենետիկում գտնվելը և հայերեն մի գրքի տպագրությանը մասնակցելը, 1691 թ. առաջնորդական պաշտոնը շարունակելը, 1696 թ. Կ. Պոլսում լինելը ու կաթոլիկություն քարոզելը, Ավետիք պատրիարքի հրահանգով բանտարկվելը, 1706 թ. դեռ ողջ լինելը՝ հիշվում է Աղեքսանդր կաթողիկոսին պոլսահայերի կողմից գրված մահսերում (հանրագիր), և վերջապես, որպես Էջմիածնի նվիրակ ու Զմյուռնիայի առաջնորդ, հիշվում է Հովսեփ արք. Քյոլեյանը, որ կաթոլիկ էր, և կաթողիկոսը նրան Հռոմ պետք է ուղարկեր, եթե մահը չկանխեր: «Հիմա հետաքրքրական է ճշդել, թէ 1661-էն մինչև 1706 յիշատակուած Զմիւռնիոյ առաջնորդ Յովսէփը միևնոյն անձն է, թէ իրարմէ տարբեր երկու անձեր են: Այս հանգոյցը փափագելի էր, որ լուծուէր»[11],– գրում է Ա. Ալպոյաճյանը:

Կարելի է մեկ կարևոր տվյալ ավելացնել Զմյուռնիայի առաջնորդ Հովսեփ վարդ. կենսագրությանը, որ, կարծում ենք, ամրագրում է նրա առաջնորդական պաշտոնի սկիզբը: Մատենադարանում պահվող՝ Փիրղալեմյանի հավաքածուի մի ձեռագրում (Հիշատակարան, պահված է եղել Զմյուռնիայի եկեղեցում) ինքը՝ Հովսեփ վարդ. հայտնում է. «Թուին ՌՃԼԲ (1683) յօգոստոս քսանվեց ես Յովսէփ վարդապետս Իզմիրու առաջնորդ և (իմ) փոքրաւորն Ազարիայն այս թուիս մտանք Իզմիրս. Եւ այս թուիս յունիս մէկն ելանք ի սուրբ Էջմիածնէն դէպի Իզմիրս»[12]:

Հետևաբար, Հովսեփի առաջնորդության սկիզբը պետք է համարել 1683-ը և այս դեպքում Հ. Քոսյանի վկայակոչած՝ Մանիսայի եկեղեցու 1661 թ. արձանագրության մեջ հիշվող Հովսեփի ինքնությունը, թվում է, կորցնում է իր նշանակությունը, որովհետև նա չի նշվում որպես առաջնորդ: Ա. Ալպոյաճյանը ևս կանգ է առնում այս հանգամանքի վրա՝ նկատելով, թե այդ արձանագրության մեջ «չրսւիր, թէ առաջնորդ է»[13]: Մնում է, ուրեմն, ճշտել Հովսեփի ինքնությունը 1689 (Ս. Ստեփանոս եկեղեցու արձանագրությունը) – 1706 (այդ թվականին՝ Հովսեփի մասին վերջին տեղեկությունը) ժամանակահատվածում:

Վերադառնանք Մանիսայի եկեղեցու 1661 թ. վերոհիշյալ արձանագրությանը: Որևէ կապ չունենալով Հովսեփի բուն առաջնորդական գործունեության հետ, այսուհանդերձ, այն օգնում է բացահայտելու կամ ճշտելու այդ գործունեության ժամանակային կտրվածքը: Եթե նրա առաջնորդության ժամանակը 1661–1706 թթ. երկար ու ձիգ տարի-

---

անվան հիշատակումը այս իմաստով վերջ է դնում որևէ տարակուսանքի: Զմյուռնահայերը երկրորդ եկեղեցին ունեցել են շատ ավելի ուշ՝ 1801-ից՝ Ս. Լուսավորչյան եկեղեցին:

[11] Ա. Ա լ պ օ յ ա ճ ե ա ն. Իզմիրի հայոց առաջնորդները, թիւ 9, էջ 281: Հովսեփի մասին Ա. Ալպոյաճյանի դիտողությունները՝ տե՛ս նույն տեղում, էջ 280–281:

[12] ՄՄ, Փիրղալեմյանի հավաքածու, ձեռ. 6332, էջ 251ա:

[13] Ա. Ա լ պ օ յ ա ճ ե ա ն. Իզմիրի հայոց առաջնորդները, թիւ 9, էջ 280:

ների ընթացքը կասկածի կամ ճշտման տեղիք կարող էր տալ, ապա նույնը չի կարելի ասել 1683–1706 թթ. ժամանակահատվածի համար, որտեղ Հովսեփին վերաբերող տվյալների և ամենից առաջ՝ առաջնորդական շրջանի տրամաբանության մեջ ոչ մի տարակուսելի բան չկա: Հետևաբար, շատ հավանական է, որ Հովսեփը կամ Հովսեփ Քյոլեյանը միևնույն անձը լինի, ով հիշվում է 1683–1706 թթ. մեր դիտարկած բոլոր վավերագրերում, այսինքն՝ Էջմիածնի նվիրակը և առաջնորդը Զմյուռնիայում՝ այդ տարիներին:

8. Իգնատիոս Միականի, *1670-ից առաջ:*

Այս հոգևորականը չի մտել ո՛չ Ա. Ալպոյաճյանի, ո՛չ էլ Տ. Պալյանի ցուցակի մեջ: Ե. Քյոմուրճյանի՝ 1670 թ. մի գրության մեջ նա հիշվում է որպես Էջմիածնի նվիրակ (որ հոմանիշ է առաջնորդին)՝ բացասական թանձր գույներով. «Իգնատիոս Միականի, նուիրակ Էջմիածնայ կրկին կրկին չափով ծախէր զմեռոն յոյժ անիրաւութեամբ, ի սահմանս Զմիւռնոյ յանկարծ մեռաւ ի գիւղս տաճկաց»[14]: Ուրեմն, Իգնատիոսը նվիրակ և առաջնորդ է եղել այդ թվականին կամ դրանից առաջ, առավել հավանական է՝ 1660-ական թթ., երբ սրվել էր պայքարը Հակոբ Ջուղայեցու և Եղիազար Այնթափցու միջև՝ Օսմանյան Թուրքիայում Էջմիածնի իրավունքների շուրջ[15]: Եղիազարին սատարող Ե. Քյոմուրճյանը (անշուշտ, ոչ բոլոր, այդ թվում և Էջմիածնին հակաթոռ կաթողիկոսություն ստեղծելու հարցերում) հանգամանորեն խոսում է Հակոբ կաթողիկոսի կողմնակիցների, նրանց հետ և Իգնատիոս Միականու վախճանի մասին:

Առաջնորդների ցանկում Ա. Ալպոյաճյանը, և նրա հետևությամբ Տ. Պալյանը, զետեղել են Գրիգոր վարդ. Սամուելյանին՝ *XVII դ. վերջ – XVIII դ. սկիզբ կտրվածքով: Նշում են նաև, որ այս անձը հայտնի է Տէրեայի ծածկանվամբ, իբրև աշուղ, երգել է հայերեն և թուրքերեն: Տ. Պալյանը, ցավոք, չի նշում իր աղբյուրը[16]: Ա. Ալպոյաճյանի համոզիչ կարծիքով, Տ. Պալյանի տվյալները «վերաքննութեան կը կարօտին, վասնզի իրեն առաջնորդութեան համար որոշուած ժամանակամիջոցը կանցնի Յովսէփ եպս.-ի»[17]: Հիրավի, վերը տեսանք, որ Հովսեփն է եղել Զմյուռնիայի առաջնորդը 1683–1706 թթ., որի սահմաններում էլ Տ. Պալյանը կասկածելիորեն տեղ է վերապահում Գ. Սամուելյանին:*

---

[14] *Գ ր. Գ ա լ է մ ք է ա ր է ա ն. Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու և տասն եպիսկոպոսներու և ժամանակին հայ կաթողիկեայք, Վիեննա, 1915, էջ 73:*

[15] *Իսկապես, առհասարակ Օսմանյան Թուրքիայում Էջմիածնի իրավունքների (թեմեր տնօրինելու, Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների և Սսի ու Աղթամարի կաթողիկոսությունների նկատմամբ Էջմիածնի գերագահության և ազդեցության գործոնը) և ոչ թե սոսկ «մեռոն օրհնելու ու մեռոն բաշխելու՝ Էջմիածնի կաթողիկոսների մենաշնորհը վիճարկելու» վերաբերյալ պարզունակ ձևակերպումը, որ ի հայտ է եկել խորհրդային ժամանակներում (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 125):*

[16] *Ա. Ա լ պ օ յ ա ճ է ա ն. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 12/25 ապրիլի: Տ. Պ ա լ է ա ն. նշվ. աշխ., թիւ 1, էջ 26:*

[17] *Ա. Ա լ պ օ յ ա ճ է ա ն. Իզմիրի հայոց առաջնորդները, էջ 281:*

9. Հայրապետ վարդ., *1715:*

XVIII դ. առաջին առաջնորդներից մեկն է, որ հիշվում է Փիրղալեմյանի հավաքածուի մի հիշատակարանում. «Գրեցաւ զիրս զաւազան տալոյ իշխանութեան վարդապետականի ի թուաբերութեան Հայոց ՌՃԿԴ (1715) ամին ի մայիսի 21 ի վայելում տեառն Հայրապետի աստուածաբան վարդապետի, որ է առաջնորդ Զմիւռին քաղաքի լիկէացւոց և նահանգի նորին, որ է ուղղափառ վարդապետ Հայաստանեայց եկեղեցւոյ և քարոզ ճշմարտութեան»[18]:

Այս առաջնորդի մասին այլ տեղեկություններ մեզ հայտնի չեն:

10. Ներսես եպ. Եփեսոսի, *1717:*

Հիշատակվում է Ա. Ալպոյաճյանի ցանկում՝ Հովհ. Ոսկեբերանի «Մեկնութեան» 1717 թ. տպագրության հիշատակարանի հրումով, որտեղ հիշվում է «զգերապատիւ զՆերսէս եպիսկոպոսն Եփեսոսի»: Ա. Ալպոյաճյանը, բնականաբար, Զմյուռնիային կից Եփեսոսը առանձին թեմ չի համարում և իրավամբ կարծում է, որ Ներսեսը պարզապես «Եփեսացի» տիտղոսով էր վարում նույն Զմյուռնիայի առաջնորդությունը[19]:

11. Սիմեոն վարդ., *1718:*

Ա. Ալպոյաճյանի ցանկում անմիջապես հետևում է Ներսես եպիսկոպոսին, ընդսմին, պատմաբանը վկայաբերում է Աստվածատուր կաթողիկոսի 1718 թ. մի կոնդակը, որտեղ վերջինս Վենետիկի հայ վաճառականներին պատվիրում է ինչ-ինչ իրեր առաքել Զմյուռնիայի առաջնորդ Սիմեոն վարդապետին[20]: Տ. Պալյանի գավազանագրքում տեղ չեն գտել ո՛չ Ներսես եպիսկոպոսը, և ո՛չ էլ Սիմեոն վարդապետը:

12. Ղազար Ջահկեցի, *1735–1737:*

Հիշյալ թվականներին վարել է նվիրակության պաշտոնը՝ ըստ Տ. Պալյանի, իսկ նրանից առաջ 1737-ը ամրագրել է Ա. Ալպոյաճյանը[21]: Պաշտոնավարությունից անմիջապես հետո, ընտրվել է Էջմիածնի կաթողիկոս: Մ. Օրմանյանը առավել որոշակիորեն նշում է, որ Ջահկեցին կաթողիկոս է ընտրվել 1737 թ. հուլիսին և Էջմիածին է մեկնել իր առաջնորդական պաշտոնատեղիից[22]:

13. Մինաս արք. Փերվազյան, *1735:*

Ըստ Ա. Ալպոյաճյանի՝ առաջնորդ է եղել 1736 թ., իսկ մենք կավելացնենք՝ թերևս - Ղազար Ջահկեցուց առաջ, 1935-ին, մի կարճ ժամանակ, որովհետև վերջինս իր պաշտոնավարությունը սկսելով 1735-ին, շարունակել է վարել մինչև 1737-ը ներառյալ: 1736 թ. նա՝ «Զմիւռնիոյ արքեպիսկոպոս առաջնորդն» արդեն գտնվում էր Իտալիայում, որ-

---

[18] *ՄՄ, Փիրղալեմյանի հավաքածու, ձեռ. 6332, էջ 268-ա:*

[19] *Ա. Ա լ պ օ յ ա ճ ե ա ն. Իզմիրի հայոց առաջնորդները, էջ 281:*

[20] *Նույն տեղում:*

[21] *Տ. Պ ա լ ե ա ն. նշվ. աշխ., էջ 26: Ա. Ա լ պ օ յ ա ճ ե ա ն. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 12/25 ապրիլի:*

[22] *Մ. Օ ր մ ա ն ե ա ն. Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, էջ 3373–3374:*

տեղ ընդունել էր կաթոլիկություն և «Մխիթարեանց քով հաստատուեցաւ իբրեւ ձեռնադրիչ եպիսկոպոս… եւ 24 դեկտեմբեր 1757-ին վախճանելով…»[23]: Համենայն դեպս, 1736 թ. նա արդեն իր պաշտոնը չէր վարում և գտնվում էր Իտալիայում, թեև հիշվում է թողած պաշտոնով: Նրա առաջնորդությունը այդ թվականով ամրագրելը մեզ համար ունի զուտ պայմանական, ճշտման կարիք ունեցող նշանակություն, որն իր հերթին, ճշգրտում պետք է մտցնի նաև Ղազար Ջահկեցու պաշտոնավարության ժամանակը սահմանելիս:

14. Աղեքսանդր եպ. Բյուզանդացի (Գարագաշ), *1743–1745:*

Ա. Ալպոյաճյանը և Տ. Պալյանը Գարագաշի առաջնորդության տարիները ամրագրում են 1743 և 1745 թվականներով, ընդսմին, վերջինս հենվում է այդ թվականների՝ Ս. Ստեփանոս եկեղեցու արձանագրության և Հ. Նալյան պատրիարքի տպագրած «Մեկնություն Նարեկի» գրքի հիշատակարանի վրա[24]:

Ա. Ալպոյաճյանը կասկածում է ժամանակագրորեն Գարագաշին հետևող (1746) Պետրոս վարդապետի առաջնորդությանը՝ վկայակոչելով Այտնի եկեղեցու մի տետրակում արված ժլատ գրառումը՝ «ի ժամանակս Պետրոս վարդապետին» դարձվածով[25]: Ըստ երևույթին, Տ. Պալյանը կրկնել է Ալպոյաճյանի կամ նրա աղբյուրի տեղեկությունը՝ ինքն էլ կասկածելով Պետրոս վարդապետի վերաբերյալ տվյալների ստուգությանը[26]:

Աղեքսանդր Բյուզանդացին 1753 թ. ընտրվել է Էջմիածնի կաթողիկոս:

15. Սահակ (Իսահակ) Ա Ահազին, *1754–1755:*

Ա. Ալպոյաճյանը նրան թվագրել է 1755-ով՝ իբրև առաջնորդի, Կոլոտ Հովհաննես պատրիարքի աշակերտի և հենվելով Ալ. Գարագաշ կաթողիկոսի կոնդակի վրա՝ ուղղված «Նախ սիրեցելոյն եղբօրն մերոյ Իսահակ և առաջնորդին մերոյ աստուածաբան վարդապետին»[27]: Սահակ Ահազինը կաթողիկոս է ընտրվել Բյուզանդացու մահից հետո (1755), բայց Էջմիածին չի գնացել, պաշտոնը չի ստանձնել և միայն 1759 թ. կաթողիկոս է ընտրվել Հակոբ Շամախեցին: Ինքը՝ Սահակը, վախճանվել է 1763 թ.՝ Էրզրումի Ս. Լուսավորիչ վանքում[28]: Գր. Գալեմքյարյանը ևս Սահակի փաստական հրաժարումը նշե-

---

[23] *Գր. Գալէմքեարեան. Կենսագրութիւն Սարգիս արքեպ. Սարաֆեան եւ ժամանակին հայ կաթողիկեայք, Վիեննա, 1908, էջ 224: Այն, որ 1736 թ. Մինաս արք. գտնվում էր Իտալիայում, որտեղ տարել էր Ս. Հռիփսիմեի նշխարների մի մասը, առաջինը հայտնում է Մ. Չամչյանը (տե՛ս Մ. Չամչեան. Պատմություն հայոց, հ. Գ, Երևան, 1984, էջ 573: Տե՛ս նաև Ղ. Ալիշան. Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ Վենետաց, Վենետիկ, 1896, էջ 343):*

[24] *Ա. Ալպոյաճեան. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 12/25 ապրիլի: Տ. Պալեան. նշվ. աշխ., էջ 26–27:*

[25] *Ա. Ալպոյաճեան. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 12/25 ապրիլի:*

[26] *Տ. Պալեան. նշվ. աշխ., էջ 27:*

[27] *Ա. Ալպոյաճեան. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 12/25 ապրիլի:*

[28] *Նույն տեղում:*

լով՝ հայտնում է, որ նա մինչ այդ Զմյուռնիայի առաջնորդն էր[29]: Մ. Օրմանյանը նրա առաջնորդության տարին նշում է 1754-ը[30], Տ. Պալյանը՝ 1755-ը[31], սակայն անհայտ է մնում, թե նախընթաց որ տարվանից է սկսվում Սահակի առաջնորդությունը:

16. Աբրահամ Աստապատցի, *1756–1764:*

Առաջնորդն էր Սահակ Ահազնից հետո[32]: Աբր. Աստապատցին Զմյուռնիայում ծավալել է կրթական-լուսավորական գործունեություն, նրա առաջնորդության ժամանակ՝ 1759 թ. հիմնվում է Մահտեսի Մարկոսի տպարանը, որտեղ տպագրվել է երեք գիրք, այդ թվում և Եզնիկի աշխատությունը (1762): Աստապատցին Սիմեոն կաթողիկոսին աջակցել է ոչ միայն մշակութային անդաստանում, այլև ընդառաջել Կ. Պոլսի պատրիարքարանը վերահսկելու նրա ձգտումներին՝ կաթողիկոսական փոխանորդի միջոցով[33]: Ոչ օսմանյան իշխանություններին, և ոչ էլ Կ. Պոլսի հայ վերնախավին այս մտահղացումը չէր կարող ընդունելի լինել և արքունական հրամանով նրան հեռացնում են Կ. Պոլսից[34]: Մ. Մսերյանցն իր հերթին նկատում է, թե Աստապատցին է Կ. Պոլսում Էջմիածնի փոխանորդություն հաստատելու հարցը հղացողը[35]:

17. Ղուկաս Կարնեցի, *1764–1775:*

Սիմեոն կաթողիկոսը 1764 թ. մարտի 10-ի կոնդակով հայտնում է Զմյուռնիայի և թեմերի ժողովրդին, որ առաքում է «առաջնորդին ձերոյ Ղուկաս աստուածիմաստ վարդապետիդ, որ եկեալ այդր»[36]: Ինքը՝ արդեն կաթողիկոս օծված Ղուկասը, 1780 թ. սեպտեմբերի 7-ին զմյուռնացիներին հղած կոնդակում նշում է իր առաջնորդության ժամանակը. «Քանզի մինչև ես տակաւին ի գործ նուիրակութեան և առաջնորդութեան մայրաքաղաքիդ Զմիւռնիոյ և համայն օրինեալ վիճակացդ յամս երկոտասան», այսինքն, 1764–1776 թթ: Կարելի է կարծել, որ Ղուկասը մեկ տարով ավելացնում է իր պաշտոնավարման ժամանակը, ինչը կտեսնենք ստորև: Ե՛վ Ա. Ալպոյաճյանը, և՛ Տ. Պալյանը ենթադրաբար, բայց ճիշտ նշում են Ղուկասի առաջնորդության սկիզբը (1764), սակայն սխալվում են 1780-ը (երբ Ղուկասը կաթողիկոս ընտրվեց) համարելով նրա պաշտոնավարման ա-

---

[29] *Գր. Գալէմքեարեան, Յարութիւն Գ. Լեւոնեան. Կ. Պոլսեցի, արք. Կեսարիոյ Պաղեստինացւոց.– Հանդէս ամսօրեայ, 1913, թիւ 9, էջ 553–554: Տե՛ս նաև Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. 2, կազմ. Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 342: Սահակ Ահազնի և Էջմիածնի միաբանության՝ 1756 թ. հետո էլ շարունակվող ոչ միանշանակ հարաբերությունների մասին տե՛ս ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 12, որտեղ Սահակն ընդունում է իր կաթողիկոսական պաշտոնը, իբրև «Տէր Իսահակ, Կաթողիկոս ամենայն հայոց»:*

[30] *Մ. Օրմանեան. նշվ. աշխ., էջ 3454:*

[31] *Տ. Պալեան. նշվ. աշխ., էջ 27:*

[32] *Ա. Ալպոյաճեան. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի: Տ. Պալեան. նշվ. աշխ., էջ 27:*

[33] *Տե՛ս Մ. Չամչյան. նշվ. աշխ., հ. Գ, էջ 872:*

[34] *Տե՛ս Մ. Օրմանեան. նշվ. աշխ, էջ 3519:*

[35] *Մ. Մսերեանց. Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի, 1763–1831, Մոսկվա, 1876, էջ 1:*

[36] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 22:*

վարտի տարին[37]*: Ճիշտ է, Տ. Պալյանն այստեղ հավելում է՝ «բայց 1775-ին Զմիւռնիոյ առաջնորդ Եսայի վարդապետ մը կը յիշուի, գուցէ ասիկայ առաջնորդի բացակայ եղած ժամանակները փոխանորդութեան պաշտօն կը վարէր, այս մասին չենք կրնար որոշ բան մը ըսել»*[38]*:*

Բայց Ղուկասը էջմիածին է կանչվել 1775-ին (և ոչ թե 1780-ին), իսկ նրա փոխարեն Զմյուռնիա է ուղարկվում նոր առաջնորդ՝ այդ նույն Եսայի վարդապետը: 1775 թ. Սիմեոնը «Թուղթ մի ևս ի վերայ Ամստերդամու հայկազուն ժողովրդոյն գրեաց և զԵսայի վարդապետն նուիրակ և առաջնորդ յղելն ի Զմիւռին և զՂուկաս վարդապետն խնդրելն ծանոյց նոցա»[39]*:*

18. Եսայի վարդ., *1775–1779, 1782–1784:*

Եսային առաջնորդ է նշանակվել երկու անգամ. նախ, ինչպես տեսանք, Սիմեոնի կողմից, 1775 թ., երբ Եսային փոխարինեց Ղուկասին, և որի մասին Մ. Օրմանյանը գրում է շատ որոշակի. «Եսայի վարդապետ յաջորդ նշանակուեցաւ և 1775 յունիս 23-ին ճամբայ ելաւ»[40]*: 1779 թ. Եսային առաջնորդությունը հանձնել է Փիլիպոսին, ինչպես այդ մասին Ամստերդամի ազգայիններին էր հայտնում Սիմեոն կաթողիկոսը*[41]*, իսկ 1782 թ. մայիսին նա կրկին առաջնորդ է նշանակվում՝ փոխարինելով Փիլիպոսին*[42]*: Տ. Պալյանի աշխատության մեջ Եսային և այս Փիլիպոսն առհասարակ չեն հիշվում, նրա ցուցակում Ղուկասից հետո նշվում է Իսահակ եպ. (նույնպես Սահակ Ահագին) առաջնորդությունը՝ 1784 թ., և դրան հետևող «քանի մը տարիներ»,*[43] *որ ճիշտ չէ, ինչպես կտեսնենք ստորև:*

Եսային վախճանվել է Զմյուռնիայի առաջնորդի և նվիրակի պաշտոնում. նրա մահվան մասին զմյուռնացիները հայտնել էին Ղուկաս կաթողիկոսին, ինչը հիշում է վերջինս՝ 1784 թ. նրանց ուղղած թղթում[44]*:*

19. Փիլիպոս եպ., *1779–1782:*

Առաջնորդ՝ Եսայու կրկնակի առաջնորդական շրջանների միջև: Ա. Ալպոյաճյանը գրում է, որ «իզմիրցիք զինքը 1782-ին մերժած են»[45]*: Ի դեպ, Զմյուռնիայի թեմում առաջ-*

---

[37] *Ա. Ա լ պ օ յ ա ճ ե ա ն. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 13/26 ապրիլի: Տ. Պ ա լ ե ա ն. նշվ. աշխ., էջ 28:*

[38] *Տ. Պ ա լ ե ա ն. նշվ. աշխ., էջ 28:*

[39] *Դիւան հայոց պատմութեան, Գիրք Ը, Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը (1767–1776), հրատ. Գ. քահ. Աղանեանց, Թիֆլիս, 1908, էջ 452–453: Ինքը՝ Ղուկասը, էջմիածին է վերադարձել 1776 թ., ինչպես գրում է ինքը (Դիւան հայոց պատմութեան, Գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հ. Ա, 1780–1785, աշխատասիրութ.՝ Վ. Գրիգորյանի, Երևան, 1984, էջ 103):*

[40] *Մ. Օ ր մ ա ն ե ա ն. նշվ. աշխ., էջ 3627:*

[41] *Դիւան հայոց պատմութեան, Գիրք ԺԱ, էջ 321:*

[42] *Դիվան հայոց պատմության, Գիրք առաջին, էջ 303:*

[43] *Տ. Պ ա լ ե ա ն. նշվ. աշխ., էջ 28:*

[44] *Դիւան հայոց պատմության, Գիրք առաջին, էջ 420: Տե՛ս նաև ՄՄ, ձեռ. 2803, էջ 498:*

նորդի նշանակումը Էջմիածնի համար դյուրին և միանշանակ գործ չէր 1770–1780-ական թթ.: 1782 թ. առաջին եռամյա ժամկետը լրացնելով՝ Փիլիպոսն ընդհարվել է զմյուռնահայերի հետ, ուստի հետ է կանչվել Էջմիածին՝ իր պաշտոնը զիջելով Եսայուն: Բայց Եսային նույնպես չի լրացրել իր պաշտոնավարման երկրորդ եռամյան և 1779 թ. վերադարձել է Էջմիածին: Փիլիպոսի նշանակումը ի սկզբանե հարթ չի ընթացել. մեկ անգամ նրա պաշտոնը Սիմեոնի կողմից հաստատվելուց հետո, Ղուկասը նրան վերահաստատել է 1780 թ., հանձնարարելով զմյուռնացիներին, որպես «ծայրագոյն նուիրակի և առաջնորդի… վերստին ունիցիք ի սէր ըստ ամենայնի»[46]: Այս վերահաստատման տարին էլ, թերևս, հիմք է տվել Ա. Ալպոյաճյանին՝ թվագրելու Փիլիպոսի առաջնորդության տարիները 1780–1782 թվականներով:

20. Միքայել վարդ., *1784 թ. մայիս–դեկտեմբեր:*

Այս առաջնորդը չի հիշվում որևէ առաջնորդական ցանկում: Վախճանված Եսայի վարդ. քեռորդին էր, ում մասին Ղուկասը հայտնում է 1784 թ. մայիսի 16-ի իր կոնդակում՝ «ի վերայ բոլոր երկրին Զմիւռնու սակս կարգելոյն Միքայէլ վարդապետին ի տեղի Եսայեայ հանգուցեալ վարդապետին»[47]: Կաթողիկոսը նույնն է ծանուցում զմյուռնահայ երևելիներ Աստվածատուր Ապրոյանին և մահտեսի Կ. Չելիկյանին[48]: 1784 թ. դեկտեմբերի 22-ին Ղուկասը, սակայն, ի պատասխան «Միքայէլ պետի» խնդրանքի՝ երկարաձգել իր մնալը Զմյուռնիայում, կտրուկ առաջարկում է նրան վերադառնալ Էջմիածին. «յամենալն քո ոչ օգուտ բերէ քեզ, այլ փութա օր մի յառաջ դիմել ի սուրբ Աթոռս»[49]:

21. Գալուստ վարդ., *1785–1790:*

1784 թ. հետո Տ. Պալյանը չորս տարի բաց է թողնում՝ առաջնորդական աթոռը զբաղեցված տեսնելով միայն 1788-ին՝ ի դեմս Գալուստ վարդապետի[50], ընդսմին, չնշելով նրա առաջնորդական պաշտոնի ավարտը: Ուշագրավ է նրա կողմից Կ. Չելիկյանին ուղղված Ղուկաս կաթողիկոսի 1790 թ. հուլիսի 25-ի կոնդակի վկայակոչումը, որով կաթողիկոսը հորդորում է իր հասցեատիրոջը «Հոգեւոր որդւոյն մերոյ Գալուստ հանճարունակ վարդապետին օժանդակել ի գործսն մինչև վճարեսցէ, որ ըստ մերս վարկման, մինչ ի ժամանելս թղթոյս այդր թերևս յաւարտ իցէ հասուցեալ զնուիրակութիւն և ի պատրաստութիւն վերադարձման լինիցի: Եւ մեք մտադրեալ եմք Աստուծով դէպի աշնան եղանակն զնոր նուիրակ և առաջնորդ պատրաստել և ուղեւորել…»[51]:

---

[45] *Նույն տեղում:*

[46] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 51:*

[47] *Դիվան հայոց պատմության, Գիրք առաջին, էջ 421: ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 8:*

[48] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 5, վավ. 32, էջ 7:*

[49] *Դիվան հայոց պատմության, Գիրք առաջին, էջ 493:*

[50] *Տ. Պ ա լ է ա ն. նշվ. աշխ., էջ 28:*

[51] *Նույն տեղում:*

Դրանից հետո կաթողիկոսը, անկասկած, իր մտադրությունը կատարել է՝ Գալուստ վարդապետից հետո, 1791 թ. որպես նոր առաջնորդ և նվիրակ ուղարկելով Իսահակին, որին կանդրադառնանք քիչ անց: Կաթողիկոսի վերոհիշյալ կոնդակից պարզվում է, որ Գալուստը 1790 թ. արդեն ավարտել էր իր նվիրակության շրջանը, որ կարող էր տևել երեք և ավելի տարիներ՝ ըստ ավանդույթի: Ուստի և Գալուստի նվիրակության սկիզբը կարելի է համարել Տ. Պալյանի նշած՝ 1788-ից առնվազն երեք տարի հետ ընկած շրջանը, ավելի ճիշտ՝ 1785 թվականը, մանավանդ, ինչպես տեսանք, Միքայել վարդապետը 1784 թ. զբաղեցնում էր իր պաշտոնը և նոր առաջնորդը (Գալուստը) Զմյուռնիա կարող էր գնալ 1785 թվականին:

22. Սահակ (Իսահակ) Բ Ահագին, *1791–1793:*

Ա. Ալպոյաճյանը նրա առաջնորդության տարին է համարում 1790–1793 թթ.[52]*, մինչդեռ Իսահակը Զմյուռնիա է ուղարկվել 1791 թ., ինչպես տեղեկացնում է Ղուկաս կաթողիկոսը Հովսեփ Արղությանին*[53]*: Տ. Պալյանը Սահակի (կամ Իսահակի) առաջնորդության սկիզբը սխալմամբ համարում է 1784-ը, որ ճիշտ չէ: «Սա իբր էջմիածնայ նուիրակ Կ. Պոլիս եկած է 1884-ին եւ նոյն տարին Իզմիր ղրկուած է առաջնորդութեան պաշտօնով,– գրում է նա:– Կերեւի, թէ հազիւ քանի մը տարիներ պաշտօն վարած է եւ կրսուի, թէ վախճանած է ի Զմիւռնիա»*[54]*: Տ. Պալյանը, կարելի է կարծել, կրկնել է Հ. Ասատուրի թույլ տված անճշտությունը. Թորոս եպ. Սսեցին, գրում է վերջինս, Կիլիկիայի կաթողիկոս օծվեց Կ. Պոլսում, 1784 թ. սեպտեմբերին, «Այդ միջոցներուն էջմիածնէն նուիրակ եկած էր Պոլիս Սահակ վարդապետ… Սահակ կատէր Զաքարիա պատրիարքը եւ օր մը վիճաբանութեան մը պահուն բարկանալով ապտակեց զայն: Կաթողիկոսը, լսելով իրողութիւնը, անմիջապէս Սահակի տեղ իբր նուիրակ ղրկեց Պոլիս նախորդ նուիրակ Մինաս եպիսկոպոսը, իսկ Սահակ Ահագին (*1792) (իմա վախճ. 1792 թ. –* Ա. Խ.*) գնաց Իզմիր իբր առաջնորդ»*[55]*:*

Հ. Ասատուրը ճիշտ չի նշում Սահակի վախճանի, ուրեմն և առաջնորդության ավարտի տարին, մինչդեռ վերջինս մահացել է Զմյուռնիայում, իբրև առաջնորդ և նվիրակ՝ 1793 թ. նոյեմբերից մի երկու ամիս առաջ[56]*:*

23. Դանիել արք., *1793–1797:*

---

[52] *Ա. Ալպոյաճեան. Իզմիրի հայոց առաջնորդները, էջ 282:*

[53] *Դիւան հայոց պատմութեան, Գիրք Թ, Յովսէփ կաթողիկոս Արղութեան, մասն 1, 1778–1800, Թիֆլիս, 1911, էջ 126: 1791 թ. մինչև Իսահակի՝ Բայազետից Զմյուռնիա հասնելը, Ղուկասը նրան ևս «թուղթ» է գրել (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 41):*

[54] *Տ. Պալեան. նշվ. աշխ., էջ 28:*

[55] *Հրանտ Ասատուր. Կոստանդնուպոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, Ստանպուլ, 2011, էջ 128:*

[56] *Տե՛ս Ղուկաս կաթողիկոսի 1793 թ. նոյեմբերի կոնդակը Զմյուռնիայի հայերին (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 59, նաև՝ թղթ. 5, վավ. 46):*

Նույն այդ կոնդակում, որտեղ Ղուկասը հայտնում էր Իսահակ վարդ. մահվան մասին, հավելում էր, որ Զմյուռնիայի նվիրակ և առաջնորդ է կարգում Դանիելին՝ «պատուիրելով նմա զի մեծ կոնդակն զոր տուեալ էաք Իսահակ վարդապետին հանգուցելոց, զայն ի յիւր անուն փոխեալ է»[57]: 1793-ը, իբրև Դանիելի պաշտոնավարման սկիզբ, նշված է նաև Ալ. Երիցյանի աշխատության մեջ[58]: Ա. Ալպոյաճյանը, մինչդեռ, Դանիելի պաշտոնավարման սկիզբն ու ավարտն է համարում 1797–1798 թթ., նույն անճշտությունը կրկնում է Տ. Պալյանը, իսկ Մ. Օրմանյանն, իր հերթին՝ 1796–1797 թթ.[59]:

Կ. Պոլսից Դանիելը Զմյուռնիա է հասնում 1794 թ. օգոստոսին, որ փաստվում է նույն ամսին Ղուկասի կողմից զմյուռնացի Գալուստ քահանային գրած թղթից[60]:

Հայտնի են Դանիելի և զմյուռնահայ վերնախավի որոշ անձանց միջև գժտությունները նոր առաջնորդի՝ իր պաշտոնատեղին գալուց ի վեր: Բանը հասավ այնտեղ, որ Դանիելի հակառակորդները «բազմակնիք մահսերօք» (հանրագրով) դիմեցին կաթողիկոսին, որ նա Դանիելին փոխարինի մեկ այլ առաջնորդով[61]: Դանիելին սատարում էր ազդեցիկ Մարգարը՝ Ապրոյան տոհմից: Զուր անցան կողմերին հաշտեցնելու՝ կաթողիկոսի և պատրիարք Զաքարիա Կաղզվանցու ջանքերը, որ նրանք գործադրեցին 1795–1797 թթ.[62]: Կաթողիկոսը, ի դեպ, ենթադրում էր, որ գործը հաշտությամբ չի ավարտվելու, ուստի գրում էր Զաքարիա պատրիարքին, որ հաշտությունը չհաջողելու դեպքում մտադիր է Զմյուռնիայում Դանիելին փոխարինել եպ. Մարտիրոսով, իսկ իրեն՝ Դանիելին, նույն պաշտոնով ուղարկել Ռումելիա[63]: Կաթողիկոսը կանխել էր իրադարձությունների ընթացքը. 1797 թ. Դանիելը մեկնում է Ռումելիա: Նա կաթողիկոս է ընտրվել 1801 թ.:

24. Մարտիրոս արք., *1797–1816:*

Տ. Պալյանը նրա առաջնորդության սկիզբն է նշում 1798-ը, իսկ Ա. Ալպոյաճյանն անստույգ է համարում Հ. Քոսյանի նշած՝ 1800–1801 թթ. Զմյուռնիայի առաջնորդ Մարտիրոս Սյունյաց եպ. և՛ անունը, և՛ ժամանակը: Նա նկատում է, որ իրականում խոսքը վերաբերում է 1799–1801 թթ. միջոցների առաջնորդ Մարտիրոս Կեսարացուն և որ Հ. Քոսյանի այդ սխալը գալիս է ոչ ճիշտ ընթերցված մի հիշատակարանից[64]: Միաժամանակ, Ալպոյաճյանը Մարտիրոսի պաշտոնավարման ժամանակն է համարում 1798–

---

[57] *Նույն տեղում:*

[58] *Նիւթեր Ներսէս Ե-ի կենսագրութեան համար: Ժողովեաց Ադ. Երիցեանց, Թիֆլիս, 1877, էջ 27:*

[59] *Ա. Ա լ պ օ յ ա ճ է ա ն. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 13/26 ապրիլի: Տ. Պ ա լ է ա ն. նշվ. աշխ., էջ 59: Մ. Օ ր մ ա ն է ա ն. նշվ. աշխ., էջ 3692:*

[60] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 40, էջ 36:*

[61] *Դիւան հայոց պատմութեան, Գիրք Դ , Ղուկաս կաթողիկոս, Թիֆլիս, 1899, էջ 744:*

[62] ***ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 40, էջ 55–56:***

[63] *Նիւթեր Ներսէս Ե-ի կենսագրության համար, էջ 27:*

[64] *Տ. Պ ա լ է ա ն. նշվ. աշխ., էջ 60: Ա. Ա լ պ օ յ ա ճ է ա ն. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 14/27 ապրիլի: Տե՛ս նաև Հ. Ք ո ս է ա ն. Հայք Ի Զմիւռնիա, հ. 1, Վիեննա, 1899, էջ 113–114:*

1810-ը՝ նկատելով նաև, որ իրեն հայտնի չէ՝ 1810-ից հետո նա շարունակել է պաշտոնավարել, թե ոչ[65]: Մարտիրոսի առաջնորդության սկիզբը առավել ստույգ է նշված Աղ. Երիցյանի տվյալներով՝ 1797 թ., որովհետև զմյուռնացի երևելիների հետ Դանիելին հաշտեցնելու՝ կաթողիկոսի և Զաքարիա պատրիարքի անհաջող փորձերից հետո Դանիելը 1797 թ. փետրվարին մեկնում է Ռումելիա[66], իսկ դրանից հետո կարող էր նույն տարվա ընթացքում հայտնվել Զմյուռնիայում: Ի լրումն այս ամենի, 1801 թ. հուլիսին Մարտիրոսը գրում էր Դավիթ կաթողիկոսին. «Արդ… զի ահա Բ ամ եղեւ, որ ի նուիրական գործոյ վախճան առեալ, միայն առաջնորդականին կեամք և մնամք գործն պարապեալ»[67]: Ուրեմն, Մարտիրոսը դեռ 1799 թ. (կամ 1800 թ.) ավարտել է սովորաբար երեք տարի տևող նվիրական պաշտոնը, որ սկիզբ էր առել առաջնորդության հետ միասին՝ 1797 թ.:

Այժմ վերադառնանք Մարտիրոսի պաշտոնավարման ավարտին, որ 1810-ով է ամրագրում Ա. Ալպոյաճյանը: Բայց Մարտիրոսը պաշտոնավարում էր 1812 թ., այդ տարվա դեկտեմբերի 18-ին նա նամակ է գրել Ներսես Աշտարակեցուն՝ հայտնելով Զմյուռնիայում «ընդ ամին անցելոյ» ժանտախտի մասին[68]: Ավելին, կա Էջմիածնի տնտեսական հաշիվների 1816 թ. մի մատյան, որտեղ նշված է. «Ընդ Մարտիրոս եպս.-էն եկեալ իզմիրցոց տուրքն եղեւ եօթանասուն և հինգ թուման»[69]: Հետաքրքիր է, որ պահպանվել է Մարտիրոսի՝ 1811 թ. սեպտեմբերի 1-ի թվակիր կտակը, որ 1825 թ. հաստատել են զմյուռնահայ «իշխանները»[70]:

Դավիթ-Դանիելյան պայքարի տարիներին Մարտիրոսը Դավթի հուսալի կողմնակիցն էր, որ, հօգուտ իր պաշտպանյալի և համախոհի, գործի էր դնում իր ազդեցությունը ոչ միայն Էջմիածնի միաբանների, այլև Կ. Պոլսի բարձրաստիճան հոգևորականութ-

---

[65] *Ա. Ալպոյաճեան. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 13/26 ապրիլի: Մարտիրոսի պաշտոնավարման ժամանակի խնդիրը ավելի է խճճվում Ն. Ակինյանի, մեր կարծիքով, ոչ հավաստի մի տեղեկությամբ, ըստ որի, Զմյուռնիայում Ապրոյանների տոհմածառով «զբաղած է նաեւ Զմիւռնիոյ առաջնորդը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս՝ 1804-ին» (Ն. Ակինեան. Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան, Վիեննա, 1933, էջ 239): Մեսրոպ արք. մասին մեզ այլ տվյալներ մատչելի չեն: Ընդհակառակը, Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում պահվում է մի վավերագիր, որի համաձայն, Ապրոյանների տոհմածառը վավերագրերի հիման վրա կազմել է Զմյուռնիայի առաջնորդ Մարտիրոսը և որ այդ վկայականը այդ նույն՝ 1804 թ. ապրիլի 20-ին, ստորագրել և հաստատել են մի խումբ քահանաներ ու աշխարհականներ (տե՛ս Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, հ. Բ, կազմ. Յ. Ոսկեան, Վիեննա, 1963, էջ 333):*

[66] *Նիթեր Ներսէս Ե-ի կենսագրութեան համար, էջ 27:*

[67] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 11, վավ. 92:*

[68] *Նույն տեղում, թղթ. 29, վավ. 133:*

[69] *Նույն տեղում, վավ. 151:*

[70] *Նույն տեղում, թղթ. 22-բ, վավ. 52-ա:*

յան շրջանում[71]: Նրա դեմ խմբվեցին, բնականաբար, Դանիելի կողմնակիցները, որ տեղի տվեց տնական երկպառակությունների[72]: Մարտիրոսին վտանգավոր հակառակորդ էր համարում Դանիելը, ով Ալեքսանդր I-ին հղած գրության մեջ գանգատվում էր նրանից[73]: Իր երկարատև առաջնորդության համար, որքան էլ այդ տարօրինակ է, Մարտիրոսը պարտական էր Դավիթ-Դանիելյան պայքարի վայրիվերումներին:

25. Փիլիպոս եպ., *1816–1821:*

Ա. Ալպոյաճյանը վկայակոչում է 1820 թ. հոկտեմբերի 26, Իզմիր թվագրումով մի գրքի ընծայականը՝ «ի Փիլիպոս նուաստ եպիսկոպոսէ Զմիւռնոյս», հավելելով, թե «Ասով, անշուշտ, չէ կարելի թէ երբ եկած եւ երբ ձգած է Իզմիրը»[74]: Այլ աղբյուրներ, սակայն, բավականաչափ տեղեկություններ են հայտնում և՛ մեկի, և՛ մյուսի մասին:

Փիլիպոսը հաջորդել է Մարտիրոսին նույն՝ 1816 թ., որ վկայում է Եփրեմ կաթողիկոսի 1816 թ. ապրիլի 15-ի կոնդակը՝ Փիլիպոսին Զմյուռնիայի նվիրակ և առաջնորդ նշանակելու ու Մարտիրոսին հետ՝ Էջմիածին կանչելու մասին[75]: Ինքը՝ Փիլիպոսը, Զմյուռնիա է հասել 1816 թ. մայիսին[76]: Փիլիպոսի պաշտոնավարման ժամանակ է, որ զմյուռնացի Հ. Մ. Վանանդեցի քահանան ընդօրինակել է Ստ. Լեհացու՝ Թ. Աքվինացուց թարգմանած «Գիրք հոգեաց եւ հրեշտակաց» երկը՝ 1817–1820 թթ.[77]: 1816 թ. աշնանը և այնուհետև Փիլիպոսն իրականացրել է իր նվիրական առաքելությունը Զմյուռնիայի շրջակա թեմերում՝ Մանիսա, Կասաբա, Պայանտրը, Էյդեմիշ և այլուր[78]:

Իր տեղում տեսանք, որ այս առաջնորդն ունի իր անվանակիցը՝ ի դեմս դարձյալ Զմյուռնիայում 1779–1782 թթ. առաջնորդ եղած Փիլիպոսի: Ժամանակագրական կտրվածքով և տեսականորեն հնարավոր է, որ նրանք միևնույն անձը լինեն, սակայն, թվում է՝ նրանք տարբեր մարդիկ են. 1820 թ., վերջին Փիլիպոսի առաջնորդության ժամանակ գրված մի ձեռագրում տրված է նրա կենսագրությունը, որտեղ ասված է, որ

---

[71] Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, էջ 746: Հայտնի են նաև Կ. Պոլսի Գրիգոր պատրիարքի (ում նգովել էր Դավիթը) փորձերը՝ «ոտիւք եւ ձեռօք անխնամ» աքսորելու Զմյուռնիայի առաջնորդին (Դիւան հայոց պատմութեան, Գիրք Զ, կազմեց Գ. Աղանեան, Թիֆլիս, 1904, էջ 568):

[72] Զմյուռնիայում Դավթին, ուրեմն և Մարտիրոսին պաշտպանում էին երևելիներ Մոսկով Հովհաննեսը, Ստ. Ազարյանը, Գ. Հարությունյանը և այլք, Դանիելին՝ թերևս, ամենաազդեցիկ անձը՝ Մարգար Ապրոյանն իր համախոհներով (տե՛ս Դիւան հայոց պատմութեան, Գիրք Է, մասն երկրորդ, Դաւիթ կաթողիկոս, հրատ. Գ. Աղանեան, Թիֆլիս, 1909, էջ 164–165):

[73] Դիւան հայոց պատմութեան, Գիրք Ե, հրատ. Գ. Աղանեան, Թիֆլիս, 1902, էջ 290:

[74] Ա. Ա լ պ օ յ ա ճ է ա ն. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 14/27 ապրիլի:

[75] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 148:

[76] ՄՄ, ձեռ. 2718, էջ 77:

[77] Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. II, կազմ. Ն. Պողարեան. Յերուսաղէմ, 1967, էջ 615–616:

[78] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, էջ 12, 33, 39–41, 46–47:

մինչև Զմյուռնիա գալը նա նվիրակ է եղել Կարինում, Տիգրանակերտում և Ամիդում, և ոչ մի խոսք չկա այդտեղ նախկինում առաջնորդ լինելու մասին[79]*:*

Զարմանալի զուգադիպությամբ, սակայն, Փիլիպոսը, ինչպես և իր երբեմնի առաջնորդ անվանակիցը, ընդհարվել է զմյուռնահայ երևելիների հետ: 1819 թ. դեկտեմբերին Ներսես Աշտարակեցին զուր չէր գրում Մարգար Ապրոյանին, թե «յաղագս որոմանցն երկպառակութիւն ոչ պակասելոց ի վիճակի յայդմիկ»[80]*: Այս բախումները շարունակվեցին նաև 1820 թ. և ընդհուպ մինչև Փիլիպոսի հեռանալը Էջմիածին՝ 1821 թ. մարտ*[81]*:*

26. Ստեփանոս եպ. Ենովքյան, *1821–1825:*

Ե՛վ Ա. Ալպոյաճյանը, և՛ Տ. Պալյանը խախտում են առաջնորդների հերթականությունը՝ Փիլիպոսի հաջորդը համարելով Ստեփանոս եպ. Աղավնուն[82]*: Փիլիպոսին, մինչդեռ, հաջորդել է ոչ թե Աղավնին, այլ վերջինիս անվանակիցը՝ Ստեփանոս եպ. Ենովքյանը, ով Զմյուռնիա է հասել 1821 թ. հունվարի 21-ին և ստանձնել առաջնորդական պաշտոնը, իսկ Փիլիպոսը Էջմիածին է ուղևորվել նույն տարվա մարտի 20-ին՝ Մանիսայից*[83]*: Ինչ վերաբերում է Ստեփանոս եպ. Աղավնուն, ապա նա Զմյուռնիայում հայտնվել է ոչ թե որպես էջմիածնական ավանդական առաջնորդ և նվիրակ, այլ Կ. Պոլսից առաքված պատրիարքական փոխանորդ, Ստ. Ենովքյանի հրաժարականից՝ 1825 թ. փետրվարից հետո*[84]*:*

Այն, որ Բ. դուռը պատրաստվում էր Զմյուռնիայի, և նույն կերպ, կայսրությունում գտնվող այլ թեմերի ենթակայությունը դուրս բերել Էջմիածնի իրավասությունից, Ստ. Ենովքյանին հայտնի էր դեռևս 1824 թ.: Կ. Պոլսում Էջմիածնի նվիրակ արք. Աստվածատուրին, ինչպես զգուշորեն գրում էր Ներսեսը Ստեփանոսին, «կասկածն հասարակաց» ձգտում է «դադարեցուցանել ի գործոց իւրոց»[85]*: Աստվածատուրի դեմ հարուցվող*

---

[79] *ՄՄ, ձեռ. 2718, էջ 76–76-ա:*

[80] *ՄՄ, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 165:*

[81] *Տե՛ս Դիւան հայոց պատմութեան, Գիրք Դ, էջ 746:*

[82] *Ա. Ա լ պ օ յ ա ճ ե ա ն. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 14/27 ապրիլի, Տ. Պ ա լ ե ա ն. նշվ. աշխ., էջ 61:*

[83] *ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 38, վավ. 108-ա: Ներսես Աշտարակեցին նոր առաջնորդի մոտալուտ գալստյան մասին հայտնում է գործող առաջնորդ Փիլիպոսին՝ 1820 թ. դեկտեմբերին, եթե հավաստի է այս աղբյուրի թվագրումը: Նա գրում է, որ Էջմիածնի Ս. Ժողովի անդամներ Հովհ. Կարբեցին, Ստ. Ենովքյանը և Ստ. Թելավեցին մեկնել են Կ. Պոլիս, որտեղից բաժանվելու են՝ «ցրուեալք անդէն լինելոց են, մինն ի նոցանէ առ ձեզ՝ այդր Զմիւռնիոյ, մինն ի Պալիքէսէր և մինն ի Կեսարիայ (առաջնորդի պաշտոնով –Ա. Խ.) (ՄՄ, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 408): Իրականում նշված հոգևորականները Կ. Պոլիս էին հասել դեռևս 1820 թ. օգոստոսի 12-ին, երբ պոլսահայ համայնքը բռնված էր դավանական հուզումներով (ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 38, վավ. 108-բ):*

[84] *Տե՛ս Հ ր ա ն տ Ա ս ա տ ո ւ ր. նշվ. աշխ., էջ 166:*

[85] *ՄՄ, Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 161:*

վտանգներին դիմակայելու նպատակով էր, որ Ստեփանոսը պետք է մեկներ Կ. Պոլիս: Այդ ակնհայտ է դառնում Ներսես Աշտարակեցու 1824 թ. դեկտեմբերի 24-ի թվակիր նամակից՝ ուղղված Ստեփանոսին, ընդսմին, նա քանիցս պատվիրում է Զմյուռնիայի առաջնորդին՝ զգույշ լինել ավելորդ լրատվություն չտալու համար[86]: Երևում է՝ էջմիածինը փորձել է պահպանել Աստվածատուրի ներկայությունը Թուրքիայում՝ Զմյուռնիայում Ստեփանոսի առաջնորդական պաշտոնը նրան հատկացնելու գնով: Հենց այդ էլ խնդրում էին իրենց համախոսականում զմյուռնացիները պատրիարքին, այն, որ Աստվածատուրը ստանձնի իրենց հրաժարված առաջնորդ Ստեփանոսի պարտականությունները: Ինչպես գրում է Ստեփանոսը իր նամակում (1825 թ. մայիսի 5-ին), մերժելով այդ համախոսականը, պատրիարքը, ամիրաների խորհրդով մտադիր էր Զմյուռնիա ուղարկել, որպես պատրիարքական փոխանորդ, Պանտրմայի առաջնորդ Ստեփանոս արհիին (նույն Աղավնուն)[87]: Դա նշանակում էր, որ այլևս էջմիածինը զրկվում է Զմյուռնիայի իր թեմից և այն անցնում է Կ. Պոլսի պատրիարքության տնօրինությանը: Ա. Ալպոյաճյանը, ի դեպ, կարծում է, և դժվար է նրան համաձայնել, թե «պատրիարքարանն առաջին անգամ 1825-ի սկզբները փորձ մը կընէ Իզմիրն իր թեմին կցելու՝ հոն ղրկելով Ստեփաննոս Աղաւնի եպս.-ը՝ պատրիարքական փոխանորդի տիտղոսով», որից հետո «երկրորդ փորձ մը ըրած է եւ այս անգամ յաջողած է»[88]:

Ստեփանոսի վերոհիշյալ նամակը հիմնովին հերքում է այս հարցում պատրիարքարանի որևէ նախաձեռնության կամ փորձի մտահղացումը: Խոսքը վերաբերում է ոչ միայն Զմյուռնիայի, այլև ամբողջ Օսմանյան Թուրքիայում տերունի թեմերը վերացնելու, դրանք էջմիածնի իրավասությունների շրջանակից դուրս բերելու ընդհանրական որոշմանը, որ կարող էր կայացնել միայն օսմանյան պետությունը: Կարապետ պատրիարքը զմյուռնացիներին իր մերժումը հիմնավորում է աներկբա հասցեագրումով: «…ըստ որում,– հայտնում է նա,– տնօրինուեցաւ, զի ամենայն նուիրակունք Աթոռոյն Էջմիածնի, որ յՕսմանեան տէրութիւն են, գնասցեն անդ (էջմիածին – Ա. Խ.) փութով»[89]: Դա երկրից նվիրակների վտարում էր նշանակում և, հիրավի, վերացվում էին ոչ միայն Զմյուռնիայի տերունի թեմը, այլև էջմիածնապատկան մյուս բոլոր թեմերը Օսմանյան Թուրքիայում:

Ստեփանոս Ենովքյանը՝ Զմյուռնիայի տերունի թեմի վերջին նվիրակը և առաջնորդը, իր պաշտոնն ավարտեց այդ թեմի վերացումով՝ 1825 թ. սկզբներին[90]:

Այսպիսին է, մոտավորապես, Զմյուռնիայի տերունի թեմի էջմիածնական նվիրակների և առաջնորդների գավազանագրքի պատկերը, որը հետագա լրացումների ու

---

[86] *Նույն տեղում:*

[87] *ՄՄ, Դիվան Կարապետ արքեպիսկոպոսի, թղթ. 163-բ, վավ. 786:*

[88] *Ա. Ալպոյաճեան. Առաջնորդութիւն հայոց Իզմիրի, 1904, 14/27 ապրիլի:*

[89] *ՄՄ, Դիվան Կարապետ արքեպիսկոպոսի, թղթ. 163-բ, վավ. 786:*

[90] *Նույն տեղում, վավ. 760:*

ճշտումների կարիք ունի: Ինչպես երևում է սույն շարադրանքից, շատ տարիների, անգամ տասնամյակների համար առաջնորդներ չեն հիշվում, որի պատճառը մասամբ աղբյուրների բացակայությունն է, իսկ հիմնականում այն, որ Էջմիածինը և քաղաքական, և Կ. Պոլսի պատրիարքության հետ աննպաստ մրցակցության պայմաններում ժամանակին թեմի առաջնորդներ չի կարողացել ուղարկել:

Զմյուռնիայի տերունի թեմի համազգային հեղինակության շնորհիվ նրա առաջնորդներից հինգը 1737–1801 թթ. ընթացքում ընտրվել են Էջմիածնի կաթողիկոսներ՝ Ղազար Ջահկեցին (1737), Աղեքսանդր եպ. Բյուզանդացին (Գարագաշ) (1753), Սահակ (Իսահակ) Ահագինը (1756, հրաժարվել է կաթողիկոսությունից), Ղուկաս Կարնեցին (1780) և Դանիել Սուրմառեցին (1801):

ГЛАВЫ СМИРНИНСКОЙ ЕПАРХИИ ТЭРУНИ*

АЛБЕРТ ХАРАТЯН

Резюме

Восстановление хронологического списка глав Смирнинской епархии тэруни непосредственно связано с Эчмиадзинской епархией тэруни, являющей собой вековую историю института церкви. Начало восстановлению этого списка было положено исследованиями известных историографов – А. Алпояджяна и епископа Т. Паляна, однако список нуждается в дальнейшем уточнении и восполнении. История Смирнинской епархии тэруни, а значит, и списка ее глав восходит ко второму десятилетию XVII в., в частности к деятельности эчмиадзинского главы Прконтоша Карапета и завершается периодом деятельности архиепископа Степаноса Еновкяна в 1821–1825 гг. Епархия и деятельность возглавлявших ее духовных лиц имела важнейшее значение для Эчмиадзина. Смирнинское купечество и его роль в международной торговле, его традиционные связи с Эчмиадзинским католикосатом всегда были в центре внимания последнего. На протяжении долгого исторического отрезка – 1731–1801 гг. – пять представителей этой епархии были избраны католикосами Эчмиадзина, что свидетельствует об общенациональном авторитете Смирнинской армянской колонии и ее влиятельной роли.

HEADS OF THE TERUNI DIOCESE OF SMYRNA

ALBERT KHARATYAN

Summary

Restoration of the Chronological List of heads of the diocese of Smyrna is closely related to history of Etchmiatsin *teruni* (belonging to Etchmiatsin) diocese as a religious institution. The

restoration of the Chronological List takes its beginning with the researches of eminent scholars A. Alpoyachyan and bishop T. Palyan, whose additions and corrections still need to be continued. The history of the diocese of Smyrna, so the list of the heads of the diocese begins from the 2nd decade of the 17th century, in the face of Prkntosh Karapet - the head of the diocese from Etchmiatsin, and ends with the activities of archbishop Stepanos Yenovkyan in 1821–1825. The Diocese and the Activity of the heads had a great importance for Etchmiatsin. The Armenian merchants from Smyrna who had a major role in the international trade and traditional ties with Catholicosate of Etchmiatsin have always been in the center of attention of the latter's. Five heads of this diocese were elected Catholicoses of Etchmiatsin in 1731–1801: this fact proves the nationwide reputation and influential position of the Armenian community in Smyrna.